ՀՀ ԳԱԱ-ՈՒՄ ԷՐԼ ԵՆ ԱՆՑԵԼ ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ

Այն, որ հայաստանյան գիտությունը ամենեւին էլ իր լավագույն օրերը չի ապրում, թերեւս ապացուցելու խնդիր չէ: Պատճառները, իհարկե, բազմաթիվ են, եւ առաջնայիններից մեկն էլ այն է, որ ե՛ւ պետությունը, ե՛ւ հասարակությունը գիտության հանդեպ չունեն այն վերաբերմունքը, ինչը որ կար առաջներում:

Գիտության ներկայիս վիճակի պատճառների թվում կարելի է հիշատակել նաեւ ավելի կոնկրետ գործոններ՝ սկսած խիստ անբավարար ֆինանսավորումից, վերջացրած՝ հատկապես երիտասարդ կադրերի արտահոսքով, ինչը, վերջին հաշվով, նորից կապված է վատ ֆինանսավորման հետ: Բայց, իհարկե, սխալ կլիներ ամեն ինչ բարդել փողի պակասի վրա, քանի որ բազմիցս է հիմնավորվել ու ապացուցվել, որ շատ դեպքերում նույնիսկ առկա միջոցներն են ծախսվում ոչ նպատակային:

Մեկ այլ գործոն եւս կա, որը, համաձայն մի շարք հեղինակավոր գնահատականների, կարծիքների, արգելակում է Հայաստանում գիտության զարգացումը: Դա, եթե կարելի է ասել, գիտությունը, գիտնականների կառավարման, կոորդինացման համակարգն է: Իսկ ավելի կոնկրետ՝ որ Գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) կամ դրա ղեկավարությունը ինչ-որ մի տեսակ սկսել են նմանվել հայաստանյան մյուս, այսպես կոչված, ստեղծագործական միություններին: Եվ եթե ԳԱԱ-ում ամեն օր նույն գզվռտոցը չի տիրում (համենայնդեպս՝ հրապարակային), ինչ, ասենք, Գրողների միությունում, ապա դա ամենեւին էլ չի նշանակում, որ ակադեմիայում ամեն ինչ հալած յուղի պես է ընթանում, չկան ներքին բախումներ, ղեկավարների կողմից ճնշումների հիմքեր ու փաստեր: Այդ ամենին էլ սկսում են գումարվել որոշ նոր բացասական գործոններ: Համենայնդեպս, մի շարք կոնկրետ փաստեր հիմք են տալիս եզրակացնելու, որ ԳԱԱ-ում արդեն նույնիսկ անցել են գրաքննության: Իսկ թե գիտնականի նկատմամբ գրաքննությունը ինչ ծանր հետեւանքներ կարող է ունենալ ընդհանուր գիտության համար, կարծում ենք՝ բոլորն էլ գիտակցում են:

Սակայն խոսենք փաստերով. 2008 թվականի նոյեմբերի 7-ի ՀՀ ԳԱԱ-ի մաթեմատիկայի եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ն. Առաքելյանի ստորագրությունը կրող մի գրություն ուղղվեց նույն բաժանմունքի ակադեմիկոսներին եւ թղթակից անդամներին: Այդ գրությունում մասնավորապես ասվում էր. **«ՀՀ ԳԱԱ անդամների ամենամյա հաշվետվության կազմման նպատակով խնդրում ենք մինչեւ ս.թ. դեկտեմբերի 10-ը բաժանմունք ներկայացնել Ձեր գործունեության մասին հաշվետվություն...»:** Այնուհետեւ փաստաթղթում ներկայացվում է, թե ինչ տվյալներ պետք է ներառվեն գիտնականների հաշվետվությունների մեջ եւ վերջում, որպես հետգրություն, ասվում է. **«Ներկայացված նյութերը տպագրվում են առանց փոփոխությունների»:**

Հասկանալի է, ակադեմիայի անդամները ներկայացնում են իրենց հաշվետվությունները: Նման մի հաշվետվություն էլ ներկայացնում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը: Եվ արդեն այս տարի ՀՀ ԳԱԱ-ն «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների 2008թ. գործունեության համառոտ հաշվետվություն» վերնագիրը կրող առանձին գրքույկով հրապարակում է այդ հաշվետվությունները, որտեղ երկրորդը (էջ 6) Լ. Աղալովյանի հաշվետվությունն է: Երբ մեր ձեռքի տակ գտնվող այն հաշվետվությունը, որը պարոն Աղալովյանը ներկայացրել է ԳԱԱ-ին, համեմատեցինք հիշատակված գրքույկում հրապարակված նրա հաշվետվության հետ, ապա պարզվեց, որ ակադեմիային ներկայացված օրինակի մի բավականին պատկառելի հատված չի ներառվել գրքույկում, չնայած որ, ինչպես նշեցինք, մինչ այդ տրվել էր գրավոր խոստում, որ **«ներկայացված նյութերը տպագրվում են առանց փոփոխությունների»:** Ընդ որում, գրքույկից դուրս էր մնացել հաշվետվության այն հատվածը, որով ակադեմիկոսը իր կարծիքն էր հայտնել մեր երկրում «որոշ բարձրաստիճան չինովնիկների» կողմից գիտության հանդեպ ունեցած վերաբերմունքի կապակցությամբ: Համենայնդեպս, Ակադեմիայի հրապարակած գրքույկից դուրս մնացած հատվածում ակադեմիկոս Աղալովյանը գրում է. «Դժբախտաբար, տարիներ շարունակ որոշ բարձրաստիճան չինովնիկների եւ իշխանական լրատվամիջոցների կողմից հնչեցվում է այն թյուր կարծիքը, որ հայ գիտնականները կաղապարված են, նրանց աշխատանքները շատ ցածր են համաշխարհային մակարդակից, արտերկրում հեղինակություն ու ճանաչում չունեն, որը եւ ծառայում է «հիմք» գիտնականներին համարելու «ծանր բեռ» երկրի ուսերին, «հիմնավորելու» նրանց տրվող ցածր աշխատավարձերը՝ այդպես էլ չըմբռնելով հիմնարար գիտության դերը եւ նրա զարգացումն ապահովելու անհրաժեշտությունը: Այս չարամիտ եւ ապազգային մտայնության սնանկ լինելն են ընդգծում, մասնավորապես, ստորեւ բերվող երկու նամակները՝ ստացված Ռուսաստանի երկու խոշորագույն գիտական եւ արդյունաբերական կենտրոններից՝ Նիժնի Նովգորոդից եւ Նովոսիբիրսկից»: Այնուհետեւ իր հաշվետվությունում ակադեմիկոս Աղալովյանը մեջ է բերում այդ երկու նամակները, որոնք նույնպես ակադեմիայի հրապարակած գրքում տեղ չեն գտել: Ընդ որում, երկու դեպքում էլ հեղինակավոր ռուս գիտնականները տեղեկացնում են, որ պարոն Աղալովյանի որոշ աշխատություններ, որոնք ցանկանում են ուսումնասիրել, չեն կարողանում որեւէ կերպ ձեռք բերել, չնայած որ որոնել են նույնիսկ գրադարանային ֆոնդերի միջոցով: Ուստիեւ, խնդրում են ակադեմիկոս Աղալովյանին ուղարկել այդ գրքերը եւ նույնիսկ դրանց պատճենահանված տարբերակները՝ խոստանալով վերադարձնել:

Այն, որ ԳԱԱ-ի հրապարակած գրքույկից դուրս է մնացել քննադատական բովանդակությամբ հատվածը, հազիվ թե հնարավոր լինի պատահականություն համարել: Ավելի կոնկրետ՝ այդ հանգամանքը խոսում է միայն գրաքննության մասին, որով, ցավոք, ստիպված ենք ենթադրել, որ զբաղվում է Գիտությունների ազգային ակադեմիան: Կոնկրետ ո՞ւմ ցանկությամբ ու մասնակցությամբ է իրականացվում գրաքննությունը այս պահին կարող ենք միայն ենթադրել: Բայց անկախ անձանցից, փաստ է, որ նման անընդունելի երեւույթի առնչությամբ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն էլ իր հետ թին ունի պատասխանատվության բաժին, ճիշտ կլիներ, որ նա եւս մեկնաբաներ, թե ինչ մեղքով է գրաքննությունը մուտք գործել գիտությունների ազգային ակադեմիա:

Ք. ՍԱՐԳՍՅԱՆ